ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО
ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ИДЖЕВАНСКИЙ ФИЛИАЛ ФОНДА «ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ»
IJEVAN BRANCH OF «YEREVAN STATE UNIVERSITY» FOUNDATION

4001 ք. Իջևան, Ուսանողական 3, հեռ.(+374263) 4-00-50: E-mail: ysu_Ib @ysu.am, www.ijevan.ysu.am г. Иджеван, ул. Усанохакан 3, Usanoghakan 3, Ijevan

«13» 08 2024թ. / թիվ 01/1-230

«ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԳԻՇՏԻ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
(ՀՎՀՀ՝ 06971797,
հասցե՝ «ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Աղայան 74/4»,
էլ.փոստ՝ «alekterm@mail.ru»)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան,

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) կողմից 2024 թվականի ապրիլի 18-ին Տեղեկագրում (www.gnumner.am) հրապարակվել է ջեռուցման կաթսայի ձեռքբերման ԵՊՀ ԻՄ-ԳՀ-ԱՊՁԲ-24/4 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ի թիվս այլ մասնակիցների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊ ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 06971797, այսուհետ՝ Ընկերություն) և «ՄԱՐԻ ԵՎ ԳԵՎ» ՍՊ ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00449502, այսուհետ՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2-րդ նիստի արձանագրության 5-րդ կետով Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից, իսկ 2024 թվականի մայիսի 22-ին ԵՊՀ ԻՄ և Ընկերության միջև կնքվել է ԵՊՀ ԻՄ-ԳՀ-ԱՊՁԲ-24/4 ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Կնքված Պայմանագրի մատակարարման ժամանակացույցի համաձայն Ընկերությունը պարտավորվել է կնքման օրվանից հետո 20-րդ օրացույցային օրը իրականացնել մատակարարում, սակայն Պայմանագրով նախատեսված գնման առարկաների մատակարարումը մինչ օրս չի իրականացվել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն «գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը», իսկ 2.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն «վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի»:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե «**խախտել է պայմանագրով նախատեսված** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը **հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և **մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը**», ուստի Ընկերությունը Ընթացակարգի շրջանակներում ներկայացրած ապահովումները վճարելու պարագայում վերոնշյալ ցուցակում չի ընդգրկվի:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, ԵՊՀ ԻՄ-ն որոշել է պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով Պայմանագիրը 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ամբողջությամբ միակողմանի լուծել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ ՏՆՕՐՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա.Հ. ՄԱԿԱՐՅԱՆ**

Կատարող՝ Ա. Պողոսյան
Հեռ.093878714